ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 մայիսի 2024 թվականի N 165 - Ա

«ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԶԱՐԹՈՆՔ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշման N 5 հավելվածի 7-րդ աղյուսակի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսված հատկացումները՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Գարնանային զարթոնք» խորագրով մշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 890000 (ութ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ, նրա հետ կնքելով դրամաշնորհի պայմանագիր:

2. Հաստատել՝

1) «Գարնանային զարթոնք» խորագրով մշակութային միջոցառման կազմակերպական կոմիտեի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) «Գարնանային զարթոնք» խորագրով մշակութային միջոցառման անցկացման ծրագիրը՝ համաձայն հավելված N2-ի.

3)«Գարնանային զարթոնք» խորագրով մշակութային միջոցառման աշխատակարգը՝ համաձայն հավելված N3-ի.

4) «Գարնանային զարթոնք» խորագրով մշակութային միջոցառման ծախսերի

նախահաշիվը՝ համաձայն հավելված N4-ի.
5)«Գարնանային զարթոնք» խորագրով մշակութային միջոցառման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N 5-ի:

2024-05-08 09:49:57 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2024թ. մայիսի 7
ք. Կապան

Հավելված N 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2024թ. մայիսի 7-ի
N 165- Ա որոշման

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄ

«Գարնանային զարթոնք» խորագրով մշակութային միջոցառման

1. Հ. Հարությունյան - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ /նախագահ/
2. Ա. Ավագյան - ՀՀ Սյունիքի մարզպետի օգնական
3. Մ. Գանդալյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
4. Ն. Դավթյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ
5. Ս. Ավետիսյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ
6. Ա. Սիմոնյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
7. Թ. Կարապետյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
8. Վ. Արզումանյան - «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան

Հավելված N 2
Հաստատված է
ՀՀ Սյունիքի մարզպետի
2024թ. մայիսի 7-ի
N 165-Ա որոշմամբ

ԾՐԱԳԻՐ

«Գարնանային զարթոնք» խորագրով մշակութային միջոցառման

- «Գարնանային զարթոնք» միջոցառման շրջանակներում մարզում կազմակերպվելու է ասմունքի մրցույթ-փառատոն նվիրված հայ մեծանուն բանաստեղծ Համո Սահյանի ծննդյան 110-ամյակին.
- Միջոցառումն անց է կացվելու մրցույթ-փառատոնի կարգով, թիմային ձևաչափով:

- **Միջոցառման նպատակը և խնդիրները**

1. Բացահայտել սովորողների ստեղծագործական միտքն ու ստեղծագործելու կարողունակությունը.
2. Խթանել «Համո Սահյան» մարդու և բանաստեղծի նկատմամբ սովորողների հետաքրքրությունները.
3. Տարածել Համո Սահյանի ստեղծագործական -ճանաչողական աշխարհագրությունը.
4. Ստեղծել հնարավորություն՝ ներկայացնելու Համո Սահյանին սովորողների տեսանկյունից.
5. Բացահայտել շնորհալի ասմունքողներին:

- **Միջոցառման մասնակցելու պայմանները**

- Միջոցառումն անց է կացվելու 2024թ. մայիս ամսին, Սիսիան քաղաքում և Լոր գյուղում գտնվող Համո Սահյանի տուն –թանգարանում.
- Մրցութային հանձնաժողովի կողմից մասնակիցներին կուղղվեն հարցեր՝ Համո Սահյանի կյանքի և ստեղծագործությունների վերաբերյալ: (Հարցերը կվերաբերվեն գրողի կենսագրությանը, ներկայացված ստեղծագործությանը. ո՞ր թվականին է այն գրվել, ո՞ր ժողովածուում է ընդգրկված, ու՞մ է այն նվիրված և այլն).
- Պսակադրություն Համո Սահյանի հուշարձանին.
- Այցելություն Սիսիան համայնքի Լոր բնակավայր՝ Համո Սահյանի տուն- թանգարան.
- Մրցույթի մասնակից դպրոցներին կտրվեն հավաստագրեր, լավագույնները կարժանանան հուշանվերների:

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան

Հավելված N 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2024թ. մայիսի 7-ի
N 165 Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
«Գարնանային զարթոնք» խորագրով մշակութային միջոցառման

ՄՐՑՈՒՅԹԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը հայտարարում է «Համո Սահյան -110» մրցույթ-փառատոն՝ նվիրված հայ մեծանուն բանաստեղծ Համո Սահյանի ծննդյան 110- ամյակին:

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԸ

«Գարնանային զարթոնք» խորագրով մշակութային միջոցառման պատվիրատուն է ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմը, կատարողը՝ մարզային ենթակայության «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ Սյունիքի մարզի բոլոր դպրոցների 5-12-րդ դասարանների սովորողները՝ թիմային ձևաչափով /3-4 աշակերտ, 1 ուսուցիչ.
2. Մրցույթին կարող են մասնակցել երկու տարիքային խմբի՝ 5-9-րդ /հիմնական դպրոցների համար/ և 10-12-րդ /միջնակարգ դպրոցների համար/դասարանների սովորողներ.

Մրցույթին մասնակցել ցանկացող թիմերի բոլոր անդամներն անպայման պետք է ասմունքեն սահյանական մեկ բանաստեղծություն, որից հետո ներկայացնեն խմբի կողմից ընտրված՝ կանոնակարգով պահանջվող նախագծային աշխատանք՝ իր վերջնարդյունք- պրոդուկտով՝ ասեղնագործություն, նկար, ներկայացում, երգ տվյալ բանաստեղծության բառերով կամ մոտիվներով, թեմատիկ օրացույց, էջանշան, փազոլ, թերթոն/բուկլետ/, տեսաերիզ և այլն՝ նորարար միտքը թողնվում է դպրոցին:

Խմբին իր աշխատանքներն ամբողջական ներկայացնելու համար կտրվի 5-7 րոպե:

ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

1. Ստեղծված հանձնաժողովը կկատարի 3 լավագույն խմբի և լավագույն մասնակիցների /անհատների/ ընտրություն:
2. Մրցույթի արդյունքների ամփոփումից հետո նախատեսվում է այց բանաստեղծի տուն-թանգարան, որտեղ ընտրված խմբերը և անհատ-սովորողները կպարգևատրվեն ՀՀ Սյունիքի մարզպետի հավաստագրերով և հուշանվերներով:

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

Մրցույթը նախատեսվում է իրականացնել Սիսիան համայնքում: Մրցույթին մասնակցելու համար հայտերը ընդունվում են ապրիլի 9-ից ապրիլի 23-ը: Մրցույթը կկայանա մինչև մայիսի 12-ը:

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

Միջոցառումները կազմակերպվում են ըստ ծրագրի, որը հաստատված է ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են ժամանակացույցը և անցկացման վայրը: Միջոցառումների ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմկոմիտեի հետ:

Փառատոնի անցկացման հետ կապված ծախսերը հոգում է «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան

Հավելված N 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2024թ. մայիսի 7 -ի
N 165-Ա որոշման

ՆԱԽԱՀԱՇԻՎ
«Գարնանային զարթոնք» խորագրով մշակութային միջոցառման

h/h	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /հազար դրամ/
1	Տրանսպորտային միջոցների վարձակալում	4216	310.0
2	Հանրային սննդի ծառայություններ	4236	270.0
3	Նվերներ	4237	118.7
4	**Գրասենյակային ապրանքներ և նյութեր**	4261	10.0
5	Այլ ծախսեր	4861	33.0
6	Ընդամենը		741.7
	ԱԱՀ		148.3
	Ընդամենը		890.0

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյան

Հավելված N 5
ՀՀ Սյունիքի մարզպետի
2024թ ապրիլի -ի
N 165-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Գարնանային զարթոնք» խորագրով մշակութային միջոցառման

h/h	Միջոցառման անվանումը	Ժամկետը	Վայրը
1.	«Գարնանային զարթոնք» խորագրով միջոցառման շրջանակներում մարզում կազմակերպվում է ասմունքի մրցույթ-փառատոն, նվիրված Համո Սահյանի 110-ամյակին:	2024թ մայիս	ՀՀ Սյունիքի մարզ, Սիսիան համայնք
	1.1 Միջոցառման մասնակիցների մեկնում Սիսիան համայնք	ժամը 8^{00}-11^{00}	ՀՀ Սյունիքի մարզի համայնքներից
	1.2 Հանդիպում մասնակիցների հետ, ծաղկադրում Համո Սահյանի հուշարձանին	11^{00}-11^{30}	ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան
	1.3 Նախապատրաստական աշխատանքներ	ժամը 11^{30}-12^{00}	Սիսիանի Համո Սահյանի անվան մշակույթի տան դահլիճ
	1.4 Ասմունքի մրցույթ-փառատոնի 1-ին մաս	ժամը 12^{00}-14^{00}	Սիսիանի Համո Սահյանի անվան մշակույթի տան դահլիճ
	1.5 Ընդմիջում /արագ սնունդ և սուրճի սեղան/	ժամը 14^{00}-14^{30}	ք.Սիսիան
	1.6 Ասմունքի մրցույթ-փառատոնի 2-րդ մաս	ժամը 14^{30}-16^{30}	ք.Սիսիան
	1.7 Ընդմիջում	ժամը 16^{30}-17^{30}	ք. Սիսիան
	1.8 Փառատոնի արդյունքների ամփոփում, հավաստագրերի և և հուշանվերների հանձնում	ժամը 17^{30}-18^{00}	ք. Սիսիան
	1.9 Մեկնում Լոր գյուղ՝ Համո Սահյանի տուն թանգարան	ժամը 18^{30}-19^{30}	Սիսիան համայնք Համո Սահյանի տուն թանգարան
	1.20 Վերադարձ համայնքներ	ժամը 20^{00}	Մարզի համայնքներ

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան